1. ***Համայնքի Ներսես Աշտարակեցու փողոցից պատմական միջուկ տանող ճանապարհի, բազմաբնակարան 2 շենքերի բակերի կապիտալ նորոգում, Արտակի փողոցի հիմնանորոգում, բազմաբնակարան 3 շենքերի բակերի ասֆալտապատում, քայքայված հատվածների փոխարինում***

Նպատակ ունենալով Աշտարակը դարձնել տուրիստական կենտրոն, անհրաժեշտություն է առաջացել հիմնանորոգել Գևորգ Էմին-Ն.Աշտարակեցու փողոցների խաչմերուկից դեպի Մարիանե եկեղեցի և քաղաքի պատմական միջուկ տանող հատվածը, Ներսես Աշտարակեցու 2 բազմաբնակարան շենքերի բակային տարածքները, ինչպես նաև Արտակի փողոցն ու բազմաբնակարան 3 շենքերի բակային հատվածները:
Վերոնշյալ հատվածներում իրականացվելու է փողոցների և մայթերի ասֆալտապատման, բետոնային սալիկներով երեսապատման, առվի կողային ցանցաշերտի կառուցման, լուսավորության համակարգի արդիականացման և վերազինման աշխատանքներ:
Վերոնշյալ փողոցների, բազմաբնակարան շենքերի և այլ հատվածների ընտրությունը կատարվել է մի քանի չափորոշիչներով

2. *Պատմամշակութային հուշարձանների առկայություն*
3. *Տուրիստական երթուղիներում ներգրավվածություն*
4. *Գիշերակացի, հանգստի գոտիների, ժամանցի վայրերի առկայություն*
5. *Համայնքի բնակչության առավել խիտ բնակեցված հատվածներ*
6. *Սոցիալապես անապահով մեծաքանակ ընտանիքների առկայություն*
7. *Հանրակրթական 3, նախադպրոցական 3 հաստատությունների, 1 թանգարանի առկայություն*
8. *Գիտահետազոտական ինստիտուտի առկայություն*
9. *և այլն:*

Կարևորվել է նաև համայնքի տարբեր հատվածներն իրար կապող հանգույցների անցանելիության և հարմարավետության ապահովումը:
Նախատեսվում է ոչ միայն ճանապարհային տնտեսության և բակային տարածքների ամբողջական նորոգում, այլև տրվելու են ճարտարապետական նոր լուծումներ, իրականացվելու է լուսավորության համակարգի կառուցում:
Ընդհանուր առմամբ նախատեսվում է բարեկարգել, հիմնանորոգել ընդհանուր մոտ 16000 քմ մակերեսով տարածք:

Վերանորոգման ենթակա տարածքներում հողային գրունտները հիմնականում ապահովված են ամրությամբ և կայունությամբ, քանի որ նախկինում ունեցել են ասֆատբետոնե ծածկույթ: Այդ պատճառով էլ նախագծման փուլի, նախագծահաշվային փաստաթղթերի կազմման նորմատիվային պահանջների, հետազոտման, անհրաժեշտ փորձաքննության և այլ լրացուցիչ համաձայնեցումների անհրաժեշտություն չկա:
Ժամանակի ընթացքում, քայքայիչ ազդեցությունների պատճառով վերոնշյալ փողոցներում և բազմաբնակարան շենքերի բակերում քանդվել է ասֆալտբետոնե շերտը, սակայն պահպանվել է խոշորահատիկ խճի և ամուր գրունտի շերտը: Ուստի որոշ տեղերում չեն նախատեսվում կատարել քանդման և ֆրեզավորման աշխատանքներ: Իսկ այն փողոցները, որոնք չունեն ամուր և կայուն գրունտներ հողային պաստառը կառուցելիս հեռացվում է բնահողի բերրի շերտը (սևահողը):
Պաստառը իրականացվում է այնպիսի գրունտներով, որոնք ապահովում են ամրություն և կայունություն: Հողային պաստառի կառուցումից հետո իրականացվում են շերտերը:

Որպես հիմնատակին կապակցող շերտ օգտագործվում է 10-20մմ խոշորությամբ և 8-10 սմ հաստությամբ չափազատված խիճ, որով կառուցվում է նաև ռելիեֆը, լայնական թեքությունները, որից հետո 4 սմ մանրահատիկ միաշերտ ասֆալտբետոնե ծածկույթը: Նախատեսվում է նաև մայթերի վերանորոգում բետոնե գունավոր սալիկներով և ասֆալտով, ինչպես նաև ամբողջությամբ կփոխարինվեն նախատեսվող փողոցների եզրաքարերը՝ բազալտե եզրաքարով: Այն փողոցներում, որտեղ փոխարինում չի նախատեսվում, եզրաքարերի բացակայող մասերում կտեղադրվեն նորերը:

Փողոցներում և բակերում ասֆալտբետոնե աշխատանքներով հիմնանորոգում իրականացնելու համար հաշվի են առնվել բնակլիմայական պայմանները և հիմնատակի որակական ցուցանիշները: Այդ պայմաններից ելնելով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները

- Ծածկույթի հիմքի իրականացում չափազատված խիճից
- Ծածկույթի իրականացում մանրահատիկ ասֆալտբետոնից
- Մակերեսի մեկուսացում՝ ներառյալ մակերեսային մշակում և նոր միաշերտ ծածկի կառուցում
- Ջրահեռացման համակարգի վերանորոգում, որոշ հատվածներում որի իրականացում
- Նախագծքով նախատեսվող հատվածներում կանաչափատման և այլ բարեկարգման աշխատանքների իրականացում
- Պռոշյան փողոցի հատվածում՝ մանկապարտեզի, թանգարանի և բազմաբնակարան 4 շենքերին հարակից, ոռոգման նպատակով գործող բաց Մայր առվի պաշտպանիչ ճաղաշարի տեղադրում,
- Բազմաբնակարան շենքերի, մանկապարտեզների, մարդաշատ վայրերում մայթերի լայնացման նպատակով հենապատերի կառուցում:
- Գոյություն ունեցող հենապատերի նորոգում և ուժեղացում
- Որոշ հատվածներում ճանապարհային նշանների և անվտանգության տարրերի նորոգում, փոխարինում և լրացում, ճանապարհային նշագծման իրականացում
- Կողային առուների մաքրում, ակոսահանում և ամրացում
- Զբոսայգու տարածքից, մոտ 20 մեքենայի համար ավտոկայանատեղի ստեղծելու նպատակով տարածքի հատկացում,
- Անվտանգ երթևեկության ապահովման համար այգու հարակից հատվածում ավտոկայանեղու կազմակերպում

Ծրագրի արժեքը՝ 220.000.000 *ՀՀ դրամ, որից համայնքի ներդրում 121.000.000 ՀՀ դրամ*

Կատարման ժամկետը՝ 6 ամիս

Հավելված